Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Մանուկյան Հակոբ Համբարձումի «Տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրները՝ երկարաժամկետ հեռանկարում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրը երկար ժամանակ է, ինչ գտնվում է գիտական հանրության և պետական կառավարման մարմինների օրակարգում, քանի որ այն անմիջականորեն առնչվում է սոցիալական արդարության, ներառական տնտեսական աճի և արտադրական գործոնների արդյունավետ բաշխման խնդիրներին: Շուկայական տնտեսության ինքնակարգավորվող համակարգը կարող է հանգեցնել ռեսուրսների և հնարավորությունների կենտրոնացմանը երկրի առանձին տարածաշրջաններում՝ սահմանափակելով պակաս զարգացած տարածաշրջանների զարգացման հնարավորությունները:

Նման իրավիճակը բնորոշ է բազմաթիվ երկրներին՝ անկախ դրանց զարգացման մակարդակից կամ կառավարման ձևից, և կարող է ձևավորել տարածաշրջանների զարգացման անհամաչափության խորացման «փակ շրջան», երբ ավելի հաջողակ տարածաշրջանները լրացուցիչ ռեսուրսներ են ներգրավում պակաս հաջողակներից՝ վերջիններիս թողնելով զարգացման ավելի սահմանափակ հնարավորություններով:

Թեմայի արդիականությունը չի սահմանափակվում միայն սոցիալ-տնտեսական բարեկեցության և դրա արդար բաշխման հարցերով: Տարածաշրջանների անհամաչափ զարգացումը խնդիրներ է առաջացնում նաև ենթակառուցվածքների՝ տրանսպորտային, թվային և ֆինանսական համակարգերի համաչափ զարգացման ոլորտում, ինչն ազդում է ինչպես ազգային տնտեսության ներքին մեխանիզմների, այնպես էլ միջազգային տնտեսական հարաբերություններում երկրի մրցունակության վրա:

Ատենախոսության թեման արդիական է նաև պետական կառավարման և դրա իրականացման մեխանիզմների բարելավման տեսանկյունից: Ռեսուրսների սահմանափակության պայմաններում յուրաքանչյուր պետության կարևոր նպատակներից է դրանց առավել օպտիմալ բաշխումը և տնտեսական զարգացման առավել արտադրողական մոդելի ձևավորումը, քանի որ ռեսուրսների գերկենտրոնացումը առանձին «չեմպիոն» տարածաշրջաններում կարող է հանգեցնել ինչպես դրական սիներգետիկ, այնպես էլ հակառակ՝ անհամաչափությունը խորացնող ազդեցությունների:

Հիմնախնդիրը առանձնակի նշանակություն ունի նաև տեղական ինքնակառավարման արդյունավետության տեսանկյունից: Հայաստանի Հանրապետությունում կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության տարանջատումը ենթադրում է, որ երկարաժամկետ տնտեսական զարգացման ապահովման հարցում յուրաքանչյուր մակարդակ պետք է ունենա հստակ դերակատարում, իսկ տեղական մակարդակում ռազմավարական պլանավորումը և հնարավոր շոկերին դիմակայելու ճկունությունը դառնում են առանցքային գործոններ:

Այս համատեքստում հետազոտության թեման արդիական է, իսկ հիմնախնդրի լուծման ուղիների նախանշումը՝ անհրաժեշտություն:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները. Ատենախոսության *նպատակն* է «գնահատել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների զարգացման անհամաչափության հիմնական գործոնները՝ երկարաժամկետ հեռանկարում տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովման հայեցակարգի հետագա մշակմամբ»: Նշված նպատակի իրագործման համար հետազոտության շրջանակներում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

1. Գնահատել տարածաշրջանների զարգացման անհամաչափության հիմնական ազդեցությունների, ինչպես նաև այդ անհամաչափության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների հարցով ակադեմիական գրականությունը,
2. գնահատել պետության դերի վերաբերյալ ակադեմիական հայացքները տարածաշրջանների զարգացման համաչափության ապահովման համար տարածքաշրջանային և ազգային ռազմավարությունների իրականացման առումով,

3. դիտարկել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ արդյունավետ տարածքային կառավարման ռազմավարության մշակման հարցով առաջարկությունները,

4. վերլուծել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների հիմնական սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական ցուցանիշները՝ տարածաշրջանների անհամաչափության որոշիչ միտումները բացահայտելու համար,

5. մշակել և փորձարկել տարածաշրջանների մասնագիտացման մեթոդիկան՝ ըստ տնտեսական կառուցվածքի և մարդկային կապիտալի որակի չափանիշների,

6. վերլուծել հիմնական գործոնային պահանջմունքների տեսանկյունից տարածաշրջանների մասնագիտացման և գործոնային արտադրողականության փոխկապակցվածությունները,

7. մշակել տնտեսաչափական մոդել՝ առանձին սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը տարածաշրջանների գործոնային արտադրողականության մակարդակի վրա գնահատելու համար,

8. մշակել տնտեսաչափական մոդել՝ ՀՀ տարածաշրջանների տնտեսական աճի վրա արտաքին և ներքին գործոնների ազդեցության դասակարգման վերաբերյալ,

9. գնահատել ազգային և լոկալ մակարդակների ռազմավարական փաստաթղթերը՝ տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովմանն ուղղված առանձին ծրագրերի և միջոցառումների ներդրման համատեքստում,

10. գնահատել մարզկենտրոնների զարգացման ծրագրերը միջազգային կազմակերպությունների առաջարկություններին համապատասխանության հարցով,

11. ուսումնասիրել ՀՀ օրենսդրությունը տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական կայունության և անկախության ապահովման գծով,

12. մշակել հարկային եկամուտների բաշխման ֆիսկալ կանոնների փոփոխության սցենարային մոդել՝ տեղական բյուջեներում փոփոխությունները որոշելու համար,

13. մշակել պետական կառավարման ռազմավարության փոփոխության հայեցակարգային առաջարկություններ նախագծային կառավարման համատեքստում՝ տարածաշրջանների ֆինանսական անկախության շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը. Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության ծավալը 141 էջ է՝ առանց հավելվածների:

Ատենախոսության *Ներածությունում* հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, առանձնացվել են օբյեկտն ու առարկան, ներկայացվել են տեսամեթոդական հիմքերը և տեղեկատվական բազան, ձևակերպվել են գիտական նորույթները, ինչպես նաև աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին՝ *«Տարածաշրջանների անհամաչափ զարգացման հիմնական պատճառների և այդ հարցում պետական քաղաքականության դերի վերաբերյալ ակադեմիական մոտեցումների գնահատում»* գլխում հեղինակի կողմից ուսումնասիրվել են տարածաշրջանների անհամաչափ զարգացման հիմնական ազդեցությունները, դրանց ձևավորման գործոնները, ագլոմերացիայի և կենտրոն-ծայրամաս հարաբերությունների վերաբերյալ մոտեցումները, ինչպես նաև ՏՀԶԿ առաջարկությունները արդյունավետ տարածաշրջանային քաղաքականության մշակման վերաբերյալ:

Երկրորդ՝ *«ՀՀ տարածաշրջանների անհամաչափության հիմնական գործոնների գնահատում»* գլխում վերլուծվել են Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական հիմնական ցուցանիշները, իրականացվել է տարածաշրջանների մասնագիտացման գնահատում, ուսումնասիրվել են աշխատանքի արտադրողականության գործոնները, ինչպես նաև տնտեսաչափական մոդելների միջոցով գնահատվել են սեփական արտադրողականության, ՀՀ մյուս տարածաշրջանների և հարևան երկրների սահմանամերձ տարածաշրջանների ազդեցությունները:

Երրորդ՝ *«Պետական քաղաքականության գնահատումը տարածաշրջանների համաչափ զարգացման համատեքստում»* գլխում ուսումնասիրվել են ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակների ռազմավարական փաստաթղթերը, տեղական ինքնակառավարման ֆինանսական կայունության և ինքնուրույնության հարցերը, ենթակառուցվածքային զարգացման և վիճակագրական ապահովման խնդիրները, ինչպես նաև ներկայացվել են նախագծային կառավարման վրա հիմնված պետական քաղաքականության արդիականացման հայեցակարգային մոտեցումները:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծության առաջնային եզրահանգումները և ընդհանրացված առաջարկները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գիտագործնական նշանակությունը. Կատարված հետազոտության օբյեկտն են Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների տնտեսությունները, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ տարածաշրջանների տնտեսությունների անհամաչափության հիմնական սոցիալ-տնտեսական և կառավարչական գործոնները:

Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմք են հանդիսացել հայաստանյան և օտարերկրյա հեղինակների գիտական մոտեցումները, միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՏՀԶԿ-ի մեթոդական փաստաթղթերը և առաջարկությունները, ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը, ռազմավարական փաստաթղթերը, պաշտոնական վիճակագրական տվյալները: Աշխատանքում կիրառվել են գրականության և փաստաթղթերի վերլուծության, դիսկուրս-վերլուծության, համակարգային մոտեցման, վիճակագրական և տնտեսաչափական վերլուծության մեթոդներ: Ատենախոսությունը պարունակում է 15 աղյուսակ, 41 գծապատկեր և 3 հավելված:

Հետազոտության շրջանակներում ստացված արդյունքները կարող են կիրառվել ՀՀ տարածաշրջանային քաղաքականության կատարելագործման, տեղական ինքնակառավարման ռազմավարական պլանավորման և տարածաշրջանների համաչափ երկարաժամկետ զարգացմանն ուղղված պետական քաղաքականության արդիականացման գործընթացում:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը. Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումների և առաջարկությունների շրջանակում գիտական նորույթն ապահովված է համակարգված և համալիր մշակված մեխանիզմներով, որոնք արտահայտվում են հետևյալ դրույթներում.

1. Մշակվել և գնահատվել է տարածաշրջանների զարգացման անհամաչափության դետերմինանտների մոդել՝ աշխատանքի արտադրողականության հաշվարկի և Հայաստանի Հանրապետության մարզերի մասնագիտացման բացահայտման հիման վրա:

2. Մշակվել և փորձարկվել է Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների տնտեսական աճի գործոնների եռամակարդակ գնահատման մոդել, որը թույլ է տալիս տարբերակել տարածաշրջանի սեփական արտադրողականության, երկրի մնացած տարածաշրջանների արտադրողականության, ինչպես նաև հարևան պետությունների սահմանամերձ տարածաշրջանների ազդեցությունը:
3. Առաջարկվել է տարածքային կառավարման ռազմավարության արդիականացման հայեցակարգ, որն ուղղված է արտադրության գործոնների արտադրողականության բարձրացմանը նախագծային կառավարման մեխանիզմների ներդրման միջոցով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում մարզային և տեղական ինքնակառավարման ֆինանսական կայունության և ինքնուրույնության ապահովման անհրաժեշտությունը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են նաև որոշ թերություններ, որոնք ամփոփվում են հետևյալ դրույթներում.

1. Ատենախոսության 1-ին գլխում իրականացված գրականության ակնարկում ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակն անդրադառնար նաև դիտարկվող թեմայով վերջին տարիներին պաշտպանված թեկնածուական ատենախոսություններին: Մասնավորապես Գ. Բաղադյանի «Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում» և Հ. Մելքումյանի «Տնտեսության տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Նմանատիպ հետազոտությունների վերլուծությունը թույլ կտար ավելի հստակ ցույց տալ ներկայացվող աշխատանքի տեղը գիտական դաշտում և առավել համոզիչ կերպով հիմնավորել դրա նորույթը՝ ի հակադրություն արդեն իսկ առկա հետազոտությունների արդյունքների:

2. Աշխատանքում մարդկային կապիտալը հիմնավորված կերպով դիտարկվում է որպես համայնքների հավասարաչափ զարգացման կարևորագույն գործոններից մեկը, և հեղինակի կողմից հավաստիորեն փաստագրվում է Երևան քաղաք ուղղված զգալի արտահոսքի առկայությունը: Այնուամենայնիվ, հետազոտությունը կշահեր, եթե հեղինակը առանձին-առանձին ուսումնասիրեր այս արտահոսքի կոնկրետ պատճառները ըստ առանձին

մարզերի, քանի որ արտահոսքի շարժիչ գործոնները (զբաղվածության, կրթական հնարավորությունների, կենսապայմանների և այլ գործոնների հարաբերակցությունը) կարող են էականորեն տարբերվել մարզից մարզ և, հետևաբար, պահանջել տարբերակված քաղաքականության մոտեցումներ:

3. Ներկայացված առաջին գիտական նորույթի շրջանակներում հեղինակը նշում է, որ մշակվել է մոդել՝ ***հիմնված մարզերի մասնագիտացման բացահայտման վրա***: Հարկ է նշել, սակայն, որ աշխատանքում մարզերի տնտեսության կառուցվածքային վերլուծությունը կատարված է թերի ձևով, և մարզերի դասակարգումը միայն երեք լայն կատեգորիաների (կապիտալատար, աշխատատար, զբոսաշրջային) շրջանակներում բավարար հիմք չի կարող հանդիսանալ մարզերի իրական մասնագիտացման կամ դրա ներուժի ամբողջական բացահայտման համար: Միևնույն ժամանակ, մարզերի մասնագիտացման բացահայտումը թույլ կտար դիտարկել յուրաքանչյուրի մասով ինչպես առանձնահատուկ պետական քաղաքականության իրականացումը, այնպես էլ ներդրումային գրավչության բարձրացման միջոցով ներդրումային ռեսուրսների ներգրավման հնարավորությունների ստեղծումը՝ որպես տարածքային համաչափ զարգացումը խթանող գործոն:

4. Աշխատանքի 2.1.2. ենթագլխում պանելային մոդելի վերջնական սպեցիֆիկացիան իրականացված է փոփոխականների քայլ առ քայլ բացառման մեթոդով (stepwise selection with backward elimination), որը ժամանակակից էկոնոմետրիկ գրականության մեջ որոշակիորեն քննադատվում է և խորհուրդ չի տրվում օգտագործել, քանի որ այս մոտեցումը կարող է հանգեցնել գործակիցների գնահատականների շեղման, ստանդարտ սխալների թերագնահատման և, հետևաբար, վիճակագրական նշանակալիության արհեստական գերագնահատման: Այս խնդիրն առավել կարևոր է դառնում հաշվի առնելով, որ մոդելը հիմնված է ընդամենը 88 դիտարկման վրա (11 մարզ × 8 տարի). պանելային տվյալների գնահատականների ասիմպտոտիկ հատկությունների (ստանդարտ սխալների հուսալիություն, p-արժեքների ճշգրտություն) կիրառելիությունը նման սահմանափակ ընտրանքի պայմաններում առանձնապես չի քննարկվում, մինչդեռ հենց այս գործակիցների հիման վրա են կառուցվում աշխատանքի հիմնական գործնական առաջարկությունները (կրթության, առողջապահության, արդյունաբերականացման ուղղությամբ): Նախընտրելի կլիներ, եթե բացատրական փոփոխականների վերջնական հավաքածուն հիմնված լիներ

առաջին հերթին տեսական հիմնավորման վրա, իսկ stepwise-ը կիրառվեր միայն որպես լրացուցիչ, ոչ թե հիմնական չափանիշ:

5. Աշխատանքի 2.2.2. ենթագլխում հեղինակն օգտագործում է սահմանամերձ էքսպոզիցիայի պայմանական գործակից (0,2)՝ Հայաստան-Թուրքիա փակ սահմանի պայմաններում ազդեցությունը մոդելավորելու համար: Այս գործակիցը մեթոդաբանորեն հիմնավորված չէ. հեղինակը չի բացատրում, թե ինչու է ընտրվել հատուկ այս թվային արժեքը, այլ ոչ թե որևէ այլ: Քանի որ սահմանի հնարավոր բացման տնտեսական ազդեցության հետագա քանակական գնահատականները (առաջարկվող 1,14 տոկոսային կետ ուղղակի սահմանամերձ մարզերի համար) ուղղակիորեն կախված են այս կամայականորեն ընտրված պարամետրից, ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը կամ լրացուցիչ հիմնավորեր գործակցի ընտրությունը, կամ ցուցադրեր արդյունքի կայունությունը դրա տարբեր հնարավոր արժեքների պայմաններում:

6. Աշխատանքի 3.2 ենթագլխում հեղինակն առաջարկում է մարզերում ձևավորված եկամտահարկի 40-50%-ը փոխանցել տեղական բյուջեներին: Անկասկած, նման միջոցառումը կնպաստի մարզերի ֆինանսական անկախության զգալի բարձրացմանը: Այնուամենայնիվ, նման առաջարկություն ներկայացնելիս ցանկալի կլիներ, որ հեղինակը հիմնավորեր, թե այդ միջոցների կենտրոնական բյուջեից դուրսբերումն ինչպիսի ազդեցություն կունենար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ձևավորման և պլանավորման վրա, ինչը թույլ կտար ամբողջական պատկերացում կազմել առաջարկվող փոփոխության հանրագումարային տնտեսական հետևանքների մասին:

7. Ատենախոսության սեղմագիրը, ներկայացվող նորույթների հիմնավորվածության տեսանկյունից, կարող էր ավելի բովանդակալից լինել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները էականորեն չեն ազդում հետազոտության գիտական արժեքի վրա: ***Հակոբ Համբարձումի Մանուկյանի «Տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրները՝ երկարաժամկետ հեռանկարում (ՀՀ օրինակով)»*** թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, գիտական արժեք ունեցող և

ամփոփ հետազոտություն է, որով ստացված արդյունքները կարող են նպաստել ՀՀ-ում տարածաշրջանների համաչափ երկարաժամկետ զարգացման քաղաքականության կատարելագործմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի՝ ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի հանդեսներում տպագրված չորս գիտական աշխատանքներում և Scopus շտեմարանում ինդեքսավորված 1 միջազգային հոդվածում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, ***Հակոբ Համբարձումի Մանուկյանի «Տարածաշրջանների համաչափ զարգացման հիմնախնդիրները՝ երկարաժամկետ հեռանկարում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը*** համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման» կարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Տ.Ս. Մարտիրոսյան**

ՏԻԳՐԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն.Հ. Դարբինյան**

15 հուլիսի 2026թ.